№ 44 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 21 **1894** ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 21 № 44

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տգեղ վարմունք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոր գիւղատնտեսական դպրոցներ. Մատենագրութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեծ աղետ. Պատմաբանների համագումար Ժողովը Լէյպցիգում. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պիրամիդների աշխարհում.

ՏԳԵՂ ՎԱՐՄՈՒՆՔ

Հայ հասարակութիւնը շատ շնորհակալ պէտք է լինի Արշէն երէցից և Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանից, որ նրանք հանդէս գալով՝ մէկը „Արարատում“, միւսը „Մշակի“ մէջ, հրապարակ դուրս բերեցին քահանայական հարցը, որը թէև վաղուց վճռված մի հարց պէտք է լիներ, բայց հանգամանքների բերմամբ և հոգևոր իշխանութեան թուլութեան պատճառով դեռ ևս մի „գորդեան հանգոյց“ է ներկայացնում մեզ համար:

Այն մեծ հետաքրքրութիւնը, որ ցոյց տուեց թէ մամուլը և թէ հասարակաց կարծիքը դէպի յարուցված խնդիրը, մեզ միանգամայն իրաւունք է տալիս կարծելու, որ գէթ այժմ այդ խնդիրը վերջնակատարապէս կը վճռվի, և հասարակութիւնը իր վճռական կարծիքը կը յայտնի՝ տգէտ հոգևորականների ձեռնադրութիւնը խափանելու մասին:

Այդ տեսակէտից միանգամայն ցանկալի է, որ թէ հասարակութեան զանազան շերջանները և թէ մամուլի օրգանները մանրամասնաբար յայտնեն իրանց կարծիքները և խնդիրը ենթարկեն ամենալուրջ ու անկողմնապահ քննութեան:

Տարաբաղդաբար, մեր մամուլի զանազան օրգանները ոչ թէ միայն անկողմնապահ չեն վերաբերվում դէպի յարուցված խնդիրը, այլ, ընդհակառակն, ամբողջ հարցը կապելով անձնաւորութիւնների հետ, փորձում են իրանց թոյլ ոյժերով պղտորել հասարակաց կարծիքը և խճճել խնդիրը:

ահա այդ խորամանկ դիտաւորութեամբ մեր մամուլի մի քանի օրգանները այս օրերս թոյլ տուեցին մի այնպիսի տգեղ, հակակրելի վարմունք, որ ոչ մի լրագրութեան մէջ չէ ընդունված, և հակառակ է լրագրական էթիկային ու գրական ազնիւ վարք ու բարքերին:

Մեր խօսքը՝ պսեվդոնիմը բաց անելու մասին է: „Արարատի“ մէջ տպված յօդուածի բովանդակութիւնը մի կողմ թողնելով, տեղական հայոց լրագիրները ամեն քայլափոխում սկսեցին ակնարկութիւններ անել այն մասին, թէ ով է Արշէն երէցը, որը ստորագրել է Էջմիածնի կրօնական ամսագրի յօդուածը, և վերջը այնտեղ արդէն հասան, որ մոռանալով լրագրական էթիկայի և ազնուութեան տարրական պահանջները, սկսեցին բացարձակ յայտնել, որ Արշէն երէցը հայոց եկեղեցու այժմեան պետն է, եկեղեցու հովւապետը,—մի խօսքով նոյն ինքն Վեհափառ կաթողիկոսը:

Հարցնում ենք.—ի՞նչ իրաւունքով:

„Արարատի“ յօդուածի տակ բաց ստորագրութիւն չը կայ, այլ հեղինակը թաղնված է կեղծ անուան, պսեվդոնիմի տակ, և այդ արդէն պարտաւորութիւն է դնում ամեն մի լրագրի, ամեն մի քննադատի վրա, մի կողմ թողնել ստորագրութիւնը ու հեղինակի անձնաւորութիւնը և զբաղվել յօդուածի բովանդակութեամբ:

Աւելի կասենք: կեղծ ստորագրութիւնը, պատկանի նա հայոց կաթողիկոսին, թէ մի եպիսկոպոսի, կամ նոյն իսկ մի սոսկ քահանայի,—կատարեալ իրաւունք է տալիս իւրաքանչիւր քննադատի ամենայն խստութեամբ վերաբերվել դէպի յայտնած մտքերը, չը մտածելով յօդուածագրի դիրքի և նրա անձնաւորութեան մասին:

Եւ անկասկած, այդ նպատակով էլ „Արարատի“ յօդուածագիրը թաղնվել է կեղծ անուան տակ, որպէս զի իր յայտնած կարծիքները և մտքերը ենթարկվեն բազմակողմանի քննութեան, առանց կաշկանդվելու այն բանով, թէ ո՞վ է գրողը՝ կաթողիկոս, մի եպիսկոպոս, թէ մի հասարակ քահանայ:

Ենթադրենք մի րոպէ, որ Արշէն երէցը Վեհափառ կաթողիկոսն է: Ով կարող էր արգելել, որ Վեհափառը բացարձակ կերպով, կաթողիկոսական մի կոնդակով յայտնէր „Արարատի“ էջերում, որ ինքը թոյլատրում է ուսեալ կամ տգէտ տիրացուների ձեռնադրութիւնը: Այն ժամանակ, ի հարկէ, ոչ մի հայ հոգևորական, լինի դա Արիստակէս եպիսկոպոսի նման հեղինակաւոր անձն, թէ մի ուրիշը, իրաւունք չէր ունենայ հրապարակով հակաճառելու կաթողիկոսական կոնդակին: Դա պարզ է:

Բայց քանի որ ինքը հեղինակը (եթէ ընդունենք, որ Արշէն երէցը կաթողիկոսն է) թաղնվում է կեղծ անուան տակ, քանի որ նա իր յօդուածի մէջ ոչ թէ հրամաններ է տալիս, այլ երևոյթներ է ուզում պարզել, անկասկած նա հէնց ինքը դրանով ուզում է, որ իր յօդուածը և իր մտքերը անարգել կերպով ենթարկվեն քննութեան, պարզաբանութեան, և եթէ հարկ լինի՝ նոյն իսկ խիստ յարձակմունքների:

Ահա այդ հասկանալի, լոգիկական պատճառով, մենք միանգամայն չենք հասկանում հայոց լրագիրների տգեղ վարմունքը, որով նրանք սկսեցին տարածել և համոզել հասարակութեանը՝ թէ Արշէն երէցը ինքը Վեհափառ կաթողիկոսն է: Այդպիսի մի տգեղ, հակակրելի, նոյն իսկ ապօրինի քայլ անելու համար, նրանք ոչ իրաւունք ունէին և ոչ էլ, կարծում ենք, թոյլտուութիւն Արշէն երէցի կողմից:

Հասարակութիւնը, ի հարկէ, շատ լաւ գիտէ, որ աշխատելով բաց անել Արշէն երէցի ծածկանունը, այդ լրագիրները ուզում էին ձնշում գործ դնել հասարակաց կարծիքի վրա:

Սակայն ի զուր:

Մեզ համար և ամբողջ հասարակութեան համար Արշէն երէցը մնում է Արշէն երէց, և ամեն մարդ կատարեալ իրաւունք ունի ամենախիստ քննութեամբ վերաբերվել դէպի Նրա յօդուածի իւրաքանչիւր տողը, իւրաքանչիւր միտքը:—Երբ գրողը պսեվդոնիմով է հրապարակ ելել, այն ժամանակ անձնաւորութեան մասին խօսք լինել չէ կարող, ով և լինի այդ անձը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ինչպէս յայտնի է, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը որոշել է ժողովրդական սկզբնական դպրոցներին կից հիմնել գիւղատնտեսական բաժանմունքներ՝ գիւղացիների և մանր կալուածատէրերի մէջ գիւղատնտեսական գիտելիք և արհեստներ տարածելու ու զարգացնելու նպատակով:

Նայելով տեղին և յարմարութեան պէտք է այդ դպրոցների մէջ մտցնվի գիւղատնտեսութեան այս կամ այն ճիւղը, այն է՝ այգեգործութիւն, պարտիզպանութիւն, մեղուաբուծութիւն, բամբակագործութիւն, չերամագործութիւն, պտղապահութիւն, պանրագործութիւն և անասնապահութիւն. իսկ արհեստներից հետեւեալները՝ հիւսնութիւն, ատաղձագործութիւն, դարբնութիւն, սայլագործութիւն, կերպասահիւսութիւն և այլն:

Այժմ ենթադրութիւն կայ այդ տեսակ գիւղատնտեսական բաժանումներ բանալ մեր երկրի՝ Անդրկովկասի հետեւեալ գիւղերում—Դաղքիսաման, Ջիբրայիլ, Գօրիս, Աղդաշ, Կուսապատ, Շիխլար, Սալահլի, Սլօվիանսկ, Գետաշէն, Ղարաչինար, Վարդաշէն, Պարդաւ, Աղդամ, Տող, Հաղրութ, Դիլիջան, Ղարաքուլաղ և Զուրնաբաղ:

Տարակոյս չը կայ, որ եթէ գործը լաւ կերպով տանվի, մեր երկրի տնտեսական զարգացումը կարող է բաւական մեծ զարկ ստանալ այդ նոր տիպի դպրոցներից:

Ցաւում ենք միայն, որ շատ տեղերում, ժողովրդի աղքատութեան պատճառով, այդ դպրոցների հիմնարկութիւնը երկար ժամանակով պէտք է յետաձգվի, որովհետև ինչպէս երևում է մեր ստացած տեղեկութիւններից, մի քանի գիւղերում և աւաններում արդէն հասարակութիւնը պատասխանել է, որ համակրելով հանդերձ գիւղատնտեսական դպրոցների բացման, ինքն իր կողմից դրամական նպաստ տալ չէ կարող:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց պ. Ալէքսանդր Երիցեանի մի նոր հեղինակութեան առանձին նկատվում են սարեր, որոնց մի քանիսի գագաթները ձիւնապատ են, վեհապանծ և փառաւոր տեսքով. դրանք—Օլիմպեան լեռներն են, որոնց բարձրութիւնից Արամազդը և յունական աստուածները արձակում էին իրանց շանթերը: Այդ մշտադալար կղզիները, այդ լեռները, գեղանկար տեղերը տեսնելուց յետոյ միայն մարդ կարող է հասկանալ հին յունական ազգի դիցաբանութիւնը, կեանքի կենցաղը ու աշխարհայեցողութիւնը: Ամբողջ երկու օր մենք նաւում էինք կղզիների, արշիպելագոսների միջով, որոնց ամեն մինը ունի իր փառաւոր պատմական անցեալը և ամեն մինը ահագին էջեր է գրաւում հելլենական ազգի քաղաքական և քաղաքակրթական պատմութեան մէջ: Ճիշդ է, նրանք այսօր ներկայացնում են միայն թշուառ տաճկական քաղաքների և գիւղերի կերպարանք, նրանք նմանում են բոլորովին մարած, հանգած կրակի, բայց գէթ հպարտ են, որ մի ժամանակ ջերմացրել, լուսաւորել են շատ աշխարհներ և կատարել են պատմութեան մէջ իրանց փառաւոր դերը: Ո՞վ գիտէ, գուցէ հեռու չէ և այն օրը, երբ նրանք կրկին կը հանդիսանան աղատութեան ծովի մէջ փայլող փարոսներ...

Յուլիսի 15-ին, առաւօտեան ժամը 6-ին, մենք մտանք յունական Պիրէ նաւահանգիստը: Մենք արդէն յունական թագաւորութեան մէջն էինք և Աթէնքից երկաթուղով 20 վայրկեան ճանապարհով հեռու: Այդ օրը ամբողջովին մենք նուիրեցինք հռչակաւոր Աթէնքի, նրա Ակրոպոլի և միւս հնութիւնների այցելութեան: Բայց ես նպատակ չունեմ առ այժմ հաղորդելու ընթերցողներին այդ այցելութեան տպաւորութիւնները, այնքան նրանք ճոխ, բազմազան և հիանալի են, ուստի և կարօտ ահագին նկարագրութեան:

Ես կամենում եմ ծանօթացնել իմ ընթերցողներին մի աւելի հին, աւելի փառաւոր աշխարհի հետ, որ իր պատմութիւնով, իր ինքնուրոյն կուլտուրայով ահագին դեր է խաղացել համամարդկային պատմութեան մէջ, ամբողջ հազարեակ տարիներ շարժել է մարդկութեան զարմանքը և դեռ հազարեակ տարիներ շարժելու է եկող մարդկութեան զարմանքը: Այդ երկիրը—Եգիպտոսն է, փարաւոնների և պիրամիդների աշխարհը, ուր մենք հասանք յուլիսի 17-ին, նաւելով Միջերկրական ծովի վրա:

Բայց չեմ կարող զանց առնել մի միջադէպ, որ պատահեց մեզ Աթէնքում և որը ցոյց է տալիս, թէ մինչև որ աստիճան մարդիկ ընդունակ են նոյն իսկ ամենասուրբ գործը մրոտել և կեղտոտել: Հաղիւ շոգենաւը մտաւ Պիրէի նաւահանգիստը, որ իսկոյն յայտնվեց նաւի վրա մի հայ երիտասարդ և ներկայանալով եպիսկոպոսներին Գալիցիան ազգանունով, յայտնեց, որ ինքն իբրև հայ երիտասարդ և այն ևս բռնաւոր Թուրքերից հալածված, նրանց ձեռքից փախած և ազատ Յունաստանում պատսպարված հայ երիտասարդ, սրբազան պարտաւորութիւն է համարում իր ծառայութիւնները մատուցանել հայ եկեղեցականներին, մանաւանդ հրաւիրակներին և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԻՐԱՄԻԴՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Վերջապէս 1893 թ. յուլիսի 13-ին թօթափեցինք մեր ոտքի փոշին և հեռացանք Պօլսից ռուսական «Զիխաչէվ» շոգենաւով: Թէև այդ օրը մեկնում էր և եգիպտական «Խդիվիէ» շոգենաւներից մինը, բայց մեզ խորհուրդ չը տուին նրանով գնալ, որովհետև այդ շոգենաւերը բաւական կեղտոտ և անյարմար են: Մի կէս ժամից յետոյ մենք արդէն մտել էինք Մարմարա ծովը և սահում էինք արագութեամբ նրա խաղաղ, վճիտ և ֆիրուզային մակերևոյթի վրա:

Ահա մենք անցնում ենք Սան-Ստեֆանո արուարձանի առջևից, որ հռչակաւոր է դարձել պատմութեան մէջ 1877—78 թ-ին Թիւրքիայի հետ կնքած դաշնագրով, իսկ հայերի համար այդ դաշնագրի 16-րդ յօդուածով: Սան-Ստեֆանոի մօտ այժմ կառուցանվում է ներկայ Թագաւոր Կայսրի հրամանով մի մահարձան, որտեղ պէտք է ամփոփվեն ռուս-թրքական պատերազմի ժամանակ ընկած ռուս զինուորների բոլոր նշխարները: Յարգելով զոհերի յիշատակը՝ չէինք կարող չը յիշել և անմոռաց Ներսէս Վարժապետեանին, որ այդտեղ, Սան-Ստեֆանոյում, մաշում էր յաղթողների չէմքը՝ իր թշուառ ազգի փրկութիւնը ձեռք բերելու համար:

Բայց հեռու տխուր մտածմունքներ. կեանքը եռում է Մարմարա ծովի վրա. ահագին շարժում կայ. անհամար առագաստաւոր նաւեր, շոգենաւեր, մակոյկներ—անգլիական, ռուսական, յունական, տաճկական, ֆրանսիական, իրանց ազգային դրօշակներով, ամեն րոպէ առաջդ են դուրս գալիս: Եթէ յիշենք և այն, որ Մարմարա ծովի երկու ափերը և նրա կղզիները վերին աստիճանի գեղագրական են, համարձակ կարող ենք ասել, որ Մարմարա ծովը շլացուցիչ տպաւորութիւն է թողնում ճանապարհորդի վրա և ծովային միակերպ տխուր ճանապարհորդութեան ու ձանձրոյթի հոտն անգամ չունի:

Երկրորդ օրը, յուլիսի 14-ին, առաւօտեան ժամը 6-ին շոգենաւը մտաւ Դարդանէլի նեղուցը, որը իր վեհութիւնով, գեղեցկութիւնով գերազանցում է Բոսֆորը. միայն այդտեղ բնութիւնը աւելի խոժոռ, վայրենի և կուսական է: Նեղուցի բերանում շինված է Դարդանէլ քաղաքը, որ տաճկական մի ամրացրած և զինուորված բերդ է և նոյնպէս բաժանված է երկու մասի՝ եւրոպական և ասիական:

Դարդանէլի նեղուցից այն կողմը սկսվում են արդէն յունական կղզիները. յիշողութեան մէջ վերանորոգվում են պատմական յիշատակները, անցքերը և էպոխաները. ահա հին Տրոայի ափերը,—անմիջապէս աչքիդ առաջ պատկերանում են ուխտադրուժ գեղանի Հեղինէն, Պարիսը և Աքիլլէսը, Հեկտորը, խորամանկ Ողիսէվսը, մի խօսքով ամբողջ տրոական պատերազմը: Հեռու հորիզոնում նկատվում են սարեր, որոնց մի քանիսի գագաթները ձիւնապատ են, վեհապանծ և փառաւոր տեսքով. դրանք—Օլիմպեան լեռներն են, որոնց բարձրութիւնից Արամազդը և յունական աստուածները արձակում էին իրանց շանթերը: Այդ մշտադալար կղզիները, այդ լեռները, գեղանկար տեղերը տեսնելուց յետոյ միայն մարդ կարող է հասկանալ հին յունական ազգի դիցաբանութիւնը, կեանքի կենցաղը ու աշխարհայեցողութիւնը: Ամբողջ երկու օր մենք նաւում էինք կղզիների, արշիպելագոսների միջով, որոնց ամեն մինը ունի իր փառաւոր պատմական անցեալը և ամեն մինը ահագին էջեր է գրաւում հելլենական ազգի քաղաքական և քաղաքակրթական պատմութեան մէջ: Ճիշդ է, նրանք այսօր ներկայացնում են միայն թշուառ տաճկական քաղաքների և գիւղերի կերպարանք, նրանք նմանում են բոլորովին մարած, հանգած կրակի, բայց գէթ հպարտ են, որ մի ժամանակ ջերմացրել, լուսաւորել են շատ աշխարհներ և կատարել են պատմութեան մէջ իրանց փառաւոր դերը: Ո՞վ գիտէ, գուցէ հեռու չէ և այն օրը, երբ նրանք կրկին կը հանդիսանան աղատութեան ծովի մէջ փայլող փարոսներ...

Յուլիսի 15-ին, առաւօտեան ժամը 6-ին, մենք մտանք յունական Պիրէ նաւահանգիստը: Մենք արդէն յունական թագաւորութեան մէջն էինք և Աթէնքից երկաթուղով 20 վայրկեան ճանապարհով հեռու: Այդ օրը ամբողջովին մենք նուիրեցինք հռչակաւոր Աթէնքի, նրա Ակրոպոլի և միւս

ջին մասը. «Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում» վերնագրով, որ բաւական մեծածաւալ, 658 երեսից բաղկացած մի աշխատութիւն է և ներկայացնում է 32 ամեայ (1800—1832) պատմական շրջանի նկարագրութիւնը։

Մեր գրականութեան, մանաւանդ պատմական գրականութեան մէջ այնքան հաղագիւտ են լուրջ և փոքր ի շատէ նշանաւոր գրուածքները, որ պ. Երիցեանի աշխատութիւնը արժանի է առանձին ուշադրութեան, մանաւանդ որ նրա գրուածքի առաջին մասի նիւթը վերաբերում է մեզ բաւական մօտ մի շրջանի, իսկ երկրորդ մասը, որը նոյնպէս պէտք է հրատարակվի, ինչպէս երևում է առաջաբանից, արդէն մեր ժամանակակից շրջանի պատմութիւնն է չոշափելու։

Գիրքը բովանդակում է իր մէջ Յովսէփ, Դաւիթ, Դանիէլ և Եփրեմ կաթողիկոսների ժամանակը՝ սկսած 1800-ից մինչև 1832 թիւը և այն ժամանակվայ պատմութեան վրա բաւական լոյս է գցում, որովհետև մի քանի տեղեկութիւններ, որոնք քաղված են մինչև այժմ լոյս չը տեսած կօնդակներից և ռուսաց անյայտ պաշտօնական գրութիւններից, բոլորովին նոր են և բաւական հետաքրքիր։ Ուշադրութեան աւելի արժանի են Յովսէփ Երկայնաքաղուկ Արղութեան կաթողիկոսին վերաբերեալ տեղեկութիւնները։ Այդ կաթողիկոսի անձնաւորութիւնը, նրա ունեցած դերը Կովկասի և Էջմիածնի պատմութեան մէջ նոր կողմերից լուսաբանվում են, ինչպէս և Ներսէս Աշտարակցու գործունէութիւնը, նրա կատարած դերը, ռուս և պարսից տէրութիւնների հետ ունեցած յարաբերութիւնները և Պասկեվիչի հետ ծագած անհամաձայնութեան պարագաները, խընդիրներ, որոնք մինչև այժմ ընդարձակ քննադատութեան և վիճաբանութեան առիթ են տուել, բաւական մանրամասն կերպով բացատրվում են։ Կարդալով պ. Երիցեանի գիրքը, չէ կարելի չը համոզվել, որ արդարև Յովսէփ կաթողիկոսը և Ներսէս Աշտարակցին ներկայանում են XIX դարում իբրև հսկայական անձնաւորութիւններ, իբրև հասարակական և քաղաքական լայն ծրագիր ունեցող գործիչներ, թէև նրանց գործունէութեան իմպուլս տուողը համարվում է չատերի, ինչպէս Պասկեվիչի և Էջմիածնի միաբանութեան անդամների կողմից, փառասիրութիւնը։ Ինքն պ. Երիցեան կարծէք նոյնպէս հակվում է դէպի այդ ենթադրութիւնը և Աշտարակցու փայլուն գործունէութեան մէջ կասկածում է փառասիրութեան մի մասն տեսնել, բայց այնու ամենայնիւ պ. Երիցեանը բարեխղճութեամբ է վերաբերվում նիւթերին և պատմութեան ապագայ անաչառ դատաստանի համար լայն ասպարէզ է բացում։ Թէև նիւթերի մեծ մասը բաւական հում և անմշակ է, բայց այդ նիւթերը այնքան բազմակողմանի են, փաստերը այնքան հմտութեամբ դասաւորված, որ XIX դարի պատմութիւնը գրողի գործը շատ հեշտանում է, մանաւանդ որ պ. Երիցեան որոշ սիստեմայի է ենթարկել իր աշխատութիւնը։

Ցաւում ենք միայն, որ գիրքը իր դնի պատճառով (գինն է 2 ր. 50 կ., իսկ ճանապարհածախսով 3 ր.) չէ կարող ընդհանրութեան մատչելի լինել։

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ապրիլի 16-ին, չորեքթ օր, թեթեխման երեկոյեան, Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում կարդացվեց Վեհափառ Կաթողիկոսի կօնդակը՝ սովետներին և գաղթականներին օգնելու մասին և ապա իսկոյն սկսվեց հանգանակութիւն։ Ի նկատի ունենալով, որ այդ երեկոյեան եկեղեցիները, տօնի պատճառով, լի են լինում ահագին բազմութեամբ, իրաւունք կար կարծելու, որ եկեղեցիներում սկսված հանգանակութիւնը դէթ մի քանի հազար բուբլի կը տար։ Տարաբաղդաբար, հաւաքված գումարը միայն մի քանի հարիւրի է հասնում։ Ամենամեծ գումարը գոյացել է Վանքի մայր եկեղեցում,—133 բուբլի, իսկ հարուստ Քամոյեանց եկեղեցում 100 բուբլի. Հալաթարի Շամքոռեցոց եկեղեցում 92 բուբլի. Ջիզրաշէնում 60 ր. իսկ մնացած եկեղեցիներում շատ աննշան, քսան և նոյն իսկ տասն բուբլի։

—

Էրզրումից մի մասնաւոր նամակով գրում են հետևեալը. «Քաղաքիս մէջ և շրջակայքը արմատեաց թանգութիւնը կը սաստկանայ. սովամահ կըլլան, մարդիկ կը կոտորուին, հիւանդութիւնները անտանելի են։ Մեծագոյն դժբաղդութիւնը այն է, որ տակաւին խոր ձմրան մէջ կը գտնվինք. քաղաքը ձիւնապատ, դաշտերը ձիւնապատ և ճամբաները ձիւնապատ»։

—

Ստացանք, Շուշուց 11 ստորագրութեամբ, հետեւեալ հեռագիրը. «Մեծ համակրութեամբ կարդացինք «Մշակում» Սեդրակեան եպիսկոպոսի «Ով հաւատաց» վերնագրով յօդուածը։ Ցանկանում ենք, որ հայ եկեղեցու արժանաւորագոյն ներկայացուցչի ձայնը չը մնայ «ձայն բարբառոյ յանապատի»։

—

Երեքշաբթի, ամսիս 19-ին, Թիֆլիսի այգեզործական դպրոցում տեղի ունեցաւ մի հետաքրքրական երեկոյթ, որ կազմված էր ներկայացումներից, երգերից և պարերից։ Խաղացին երեք պիէս հայերէն, վրացերէն և ռուսերէն լեզուներով։ Դերասան աշակերտները լաւ սովորել էին և աջող կատարեցին իրանց դերերը։ Երգերը երգվեցին թէ խօրով և թէ սօլո։ Շատ ախորժելի տպաւորութիւն թողեց այն հանգամանքը, որ դպրոցի կառավարիչ Կլաուսէնը այդ օրը հանդիսանում էր, իբրև ընկեր բարեկամ իր աշակերտների։ Նա ինքը վերցրել էր խաղալու մի դեր, որ կատարեց մեծ աջողութեամբ։

—

Թոյլ ենք տալիս մեզ կարծելու, որ այսօրվայ հայոց ներկայացման նպատակը կը գրաւէ դէպի թատրոն ահագին բազմութիւն։ Ներկայացումը լինելու է բանկի թատրոնում և խաղացողները, ինչպէս յայտնի է, սիրողներ են. իսկ արդիւնքը պէտք է յատկացնվի սովեալներին։

—

Ստացանք յօդուտ Երևանի և Կարսի նահանգների սովեալների. 1) Արմաւիրից, Իգնատիոս Վիրաբեանցի, Խաչատուր Խաչատուրեանցի, Պօղոս Նազարեանցի և Համբարձում Սէֆերեանի միջոցով 170 բուբլի, որ հանգանակված է յատկապէս գործակատարների շրջանում. 2) Կախից, Կարապետ Մարգարեանցի և Մովսէս Մովսէսեանցի միջոցով 37 բուբլի, հանգանակած մի խումբ վաճառականներից և տիկիններից. 3) Նոր-Նախիջևանից, Խ. Զալխուշեանից՝ 25 բուբլի. 4) Սև—Քաղաքից, 6 բուբլի, որ հանգանակել են Լիանոզեան գործարանի հայ մշակները. 5) Սև-Քաղաքից, Տ. Լիսինեանցի միջոցով՝ 11 բուբլի, որ նուիրել են տասն և մէկ երիտասարդներ. 6) Լադոժսկայա կայարանից, Յարութիւն Յարութիւնեանցի միջոցով՝ 60 բուբլի 40 կօպէկ, որ հանգանակված է այնտեղի մի խումբ կանանց և տղամարդկանց մէջ. 7) Թիֆլիսից, Ղահրաման Էլչեանից 100 բուբլի. 8) Թիֆլիսից, Մնացական Էլչեանից 2 ր.։ Ուրեմն նախկին 212 ր. 25 կօպ. հետ այժմ ունենք 623 բուբլի 65 կօպէկ։ Այսօր, ապրիլի 21-ին, ուղարկեցինք Երևան, Բարեգործական ընկերութեան ճիւղին 100 բուբլի։ Նոր-Բայազէտի Բարեգործական ընկերութեան ճիւղին 100 բուբլի։ Կաղզուան, Բարեգործական ընկերութեան ճիւղին 100 բուբլի։ Կարս, սովեալներին օգնող մասնաժողովին՝ 100 բուբլի։ Մեզ մօտ մնաց 223 բուբլի 65 կօպէկ։ Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 2154 բուբլի 65 կօպ. ուղարկել ենք 1931 բուբլի։

—

Ստացանք յօդուտ սովեալ գաղթականների, Էջմիածին ուղարկելու համար, անյայտ ումից 10 բուբլի։ Նախկինի հետ ունենք ուրեմն 20 բուբլի։

—

«Արևելքի» մէջ կարդում ենք հետևեալ նոր շինծու լուրը. «Երևանէ առնուած լուրերուն նայելով, Աստուածաշունչի տպագրութիւնը սկսված է Ս. Էջմիածնայ տպարանին մէջ, մեծադիր և խոշորագիր, գրաբարն ու աշխարհաբարը դէմ առ դէմ. միայն թէ, ռուսահայ և թրքահայ բարբառներուն միասին տպուիլը կարելի չըլլալով, նախապատուութիւն տրուած է Պոլսոյ աշխարհաբարին, պայմանաւ որ ռուսահայ աշխարհաբարն ալ գրաբարին դէմ դրուի յաջորդ տպագրութեամբ»։ Արդեօք այդ շինծու լուրերին մի օր վերջ պէտք է լինի, թէ ոչ։

—

Երկուշաբթի, ապրիլի 18-ին, Պետերբուրգի կայսերական օպէրայի յայտնի երգչուհի Մրավինա և նոյն օպէրայի արտիստ Ֆրէյ մի կօնցէրտ տուին բանկի թատրոնում։ Յայտնի երգչուհու անունը մի չը տեսնված ահագին բազմութիւն էր գրաւել թատրոն։ Մինչև անգամ բեմի վրա մեծ բազմութիւն կար։ Վարագոյրը բացվեց և երգիչ Ֆրէյ բեմ դուրս գալով երգեց Շումանի «Երկու գրէնադէրները»։ Արտիստին հասարակութիւնը ծափահարեց։ Դրանից յետոյ ահա բեմի վրա երևաց ինքն Մրավինա, որին հասարակութիւնն ընդունեց բուռն ծափահարութիւններով։ Երգչուհին երգեց Տօմասի Համլէտ օպէրայից Scéne de Eolie, մի դուէտ Ֆրէյի հետ. Զայկօվսկու «Օրօրոցի երգը» և այլն։ Հասարակութեան ծափահարութիւններին վերջ չը կար և ամեն անգամ կրկնել էր տալիս երգածները, այնպէս որ երգչուհին պրօգրամայից դուրս երգեց և մի քանի նոր կտորներ։ Հասարակութեան կողմից ծաղիկներով մի լի զամբիւղ մատուցվեց երգչուհուն։ Մրավինայի երկրորդ կօնցէրտը տեղի ունեցաւ երէկ։

—

Արտասահմանի հայոց մի լրագրում կարդում ենք. «Կիմանանք որ Ալմանիայի Վիլհէլմ կայսրը, Վենետիկ եկած միջոցին, Ումպէրթօ թագաւորին հետ միասին Վենետկի հետաքրքրական տեղերը պտտած ժամանակ այցելեր է նաև Մխիթարեանների Ս. Ղազար վանքին։ Այս առաջին անգամը չէ որ Մխիթարեանների գրականական համբաւն ու հոյակապ շէնքերը իրենց վրա կը դարձուցանեն վեհապետական գերդաստանէ անձերի ուշադրութիւնը և անոնց այցելութեան պատուին կարժանանան։ Իտալիայի թագաւորն այս առիթով «Իտալիայի Խաչ» պատուանշանի Հրամանատարի աստիճանը շնորհեր է Ս. Ղազարի վանահայր Իգնատիոս Կիւրեղեան արքեպիսկոպոսին։»

—

«Մուրճ» ամսագիրը համակրութեամբ խօսելով Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի՝ «Մշակի» № 41-ում տպագրած յօդուածի մասին, հետևեալ անհիմն նկատողութիւնն է անում. «Ցաւելով պէտք է վկայենք, որ յօդուածի վերջում չակերտների մէջ դրած տողերը բաւականաչափ զգուշութեամբ և ճշդութեամբ չեն արտագրված Արշէն երէցի յօդուածից։ «Տգէտ ժողովրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր, և ընական կերպով չեն յարմարիր իրար» խօսքերը սրբազան Արիստակէսի յօդուածում վերագրված են նաև Հայրիկին, մինչդեռ Արշէն երէցի քարոզում նոյն այդ խօսքերը արտասանողը միայն տգէտ ժողովուրդն է»։ Ինչի վրա է հիմնած ամսագրի այդ վկայութիւնը՝ մենք չենք հասկանում։ Խորհուրդ ենք տալիս «Մուրճի» խմբագրութեանը նորից, և ուշադրութեամբ կարդալ Արիստակէս եպիսկոպոսի յօդուածը և նա կը համոզվի, որ չակերտների մէջ բերած խօսքերի սկզբին, Արիստակէս եպիսկոպոսը գրում է. «բայց գիւղացիք պատասխանում են», որից յետոյ արդէն գալիս են չակերտների մէջ՝ գիւղացիների դատողութիւնները («Մշակ» № 41, երրորդ երես, 3-րդ էջ)։ Ուրեմն որտեղից է դուրս բերել «Մուրճը», թէ գիւղացի-

---

թոյլ չը տալ, որ Պիրէում, նամանաւանդ Աթէնքում վխատցող Թիւրքիայի հայ լրտեսների ճանկը ընկնենք։ Այդ խօսքերի հետ միասին երիտասարդը տալիս է մեզ Եւրօպայում հրատարակվող հայ թերթերը, աւելացնելով. «այստեղ ազատ երկիր է, ազատ կարելի է կարդալ, այստեղ չը կայ տաճկի բռնութիւն»։ Թէև զգոյշ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան կասկածոտ և խոժոռ նայուածք ձգեց երիտասարդի վրա, բայց մենք նրա խօսքերը «հաված իւղի» տեղ ընդունելով, բոլորովին հաւատացինք և ահա Գալֆայեանի առաջնորդութեամբ գնացինք Աթէնք, այցելեցինք քաղաքը, Ակրօպոլը։ Նախաճաշ անելու համար նա մեզ առաջնորդեց մի հիւրանոց։ Ամեն անգամ, երբ պէտք էր լինում մի ծախք անել, նա թոյլ չէր տալիս, ասելով թէ «այդ խաբեբայ յոյները ձեզ կը մաշկեն, թողէք ես վճարեմ, յետոյ կը հաշուէք»։ Երեկոյեան դէմ, երբ վերադարձանք շոգենաւը, երիտասարդը ներկայացրեց 128 ֆրանկի հաշիւ և երբ Աթէնքում բնակվող հայերը, որոնց թուում կարապետ էֆ. Աղաբէգեան, թագաւորական տան ատամնաբոյժը, եկան մեզ տեսնելու, ինչ ենք իմանում. մեր բոլոր արած ծախքը հազիւ 50 ֆրանկ է և մեր պ. Գալֆայեանը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ տաճկաց տէրութեան մի լրտես...

Բայց մոռնանք Միջերկրական ծովի անհուն տարածութեան վրա նաւելու։ Խաղաղ է նա, նաւը արագ սահում է. աչքդ միայն ջուր է տեսնում և միտքդ պաշարվում է տխուր մտածմունքով, թէ ահա կարող է լինել ալէկոծութիւն և դու կը թաղվես Միջերկրական ծովի անդնդային ջրերի տակ, ինչպէս թաղվել են հազարաւորներ։

Երկար նաւելուց յետոյ, հեռաւորութեան մէջ հետզհետէ սկսեցին երևալ Աֆրիկայի ցածրիկ ափերը և հռչակաւոր Ալէքսանդրեան փարոսը, որի լոյսը հարիւրաւոր վերստերից հեռու նաւերը առաջնորդում է դիշերային մթութեան մէջ։

Շատ զգուշութեամբ և դժուարութեամբ մտնում են նաւերը Ալէքսանդրիայի նաւահանգիստը, բազմաթիւ ժայռերի պատճառով, ուստի յատուկ նաւորդներ կամ լոցմաններ կան, որոնք գալիս են շոգենաւերին ընդառաջ մակոյկներով և այդ ժայռերի միջից աջողութեամբ անց են կացնում նրանց։ Ծովափը գրանիտեայ է. նաւահանգիստը լի է ամեն ազգի և երկրի նաւերով, շոգենաւերով, մակոյկներով և մեծ կենդանութիւն, շարժում, իրարանցում է տիրում. այդտեղ դուք տեսնում էք ամեն տեսակ հագուստ, լսում էք բազմատեսակ լեզուներ, մի խայտաղէտ և խայտաճամուկ տեսարան։ Հազիւ նաւը կանգ է առնում, որ սև չալմաւոր արաբները, ֆէլլահները սպիտակ հագուստով, կամ աւելի ճիշդն ասած, ամբողջ հագուստի տեղ միայն մի երկար սպիտակ շապիկ հագին, ոտաբոբիկ, շրջապատում են ձեզ ամեն կողմից և արաբերէն, տաճկերէն, ֆրանսերէն, անգլիերէն, յունարէն, իտալերէն, ռուսերէն աղաւաղած, կոտրատած խօսքերով առաջարկում են ձեզ իրանց ծառայութիւնը։ Ընդհանուր սովորական լեզուն արաբերէնն է։

Նաւահանգստից քաղաք գնալու համար պէտք է անցնել մի քանի կեղտոտ փողոցներով և մաքսատան միջով։ Տեսնելով ֆէսաւոր պաշտօնեաներ, մենք կարծեցինք, որ Պոլսի պաշտօնեաների պէս այստեղ ևս պէտք է «բախշիշ» համար քըսակի բերանը բանալ. բայց որքան մեծ եղաւ մեր բոլորիս զարմանքը, երբ պաշտօնեաները, կատարեալ եւրօպական քաղաքավարութեամբ, թեթև կերպով աչքից անցնելով մեր իրերը, արձակեցին մեզ մի երկու բօպէից յետոյ։ Պատճառն իմանալու համար, բաւական է ասել, որ մաքսատան հսկողութիւնը անգլիացիների ձեռքումն է։

Անցնելով մաքսատնից, հետզհետէ աճում էր մեր զարմանքը. հետզհետէ բացվում էին մեր առաջ լայն, մաքուր, գեղեցիկ փողոցներ, հոյակապ, եւրօպական ճարտարապետութեամբ շինված բազմայարկանի տներ, շքեղ մագազիններ, փառաւոր մզկիթներ, եկեղեցիներ, հիւրանոցներ, վանքեր, սրճարաններ, brasserie-ներ. շքեղութիւն, ճոխութիւն, շռայլութիւն ամեն կողմ. գեղեցիկ հրապարակներ, իսկ ամենագլխաւոր հրապարակի վրա, բօրսայի հանդէպ, Մուհամմէդ-Ալիի, Եգիպտոսի անկախութեան համար պատերազմողի, խեդիվական իշխանութեան հիմնադրի արձանը, որ ներկայացնում է յաղթական Մուհամմէդ-Ալիին, չալմայով, զինաւորված և երիվարի վրա նստած։ Սակայն փողոցները դատարկ են. ցերեկը ամենքը պատսպարված են տներում անտանելի շոգի երեսից. յիշիցէք, որ Աֆրիկայումն ենք, այն ևս ամառը։

Եւ ճշմարիտ, անտանելի շոգ է անում. քրտինքը առուի պէս թափվում է մեր վրայից. եւրօպացիները, մանաւանդ անգլիացի զինուորները շոգից պատսպարվում են իրանց բամբուկային լայն գլխարկներով և առուէ շապիկներով։ Ցերեկը շարժում, կեանք չը կայ փողոցներում. առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկոյեան 7-ը բոլոր բնակիչները, եթէ միայն ամարանոց չեն գնացած, փակվում են տներում, դռցում դռները և պատուհանները, հագնում միայն մի բարակ քաթանի շապիկ և դուրս են գալիս փողոց երեկոյեան, և կեանքը, շարժումը փողոցներում, մագազիններում, հասարակական տեղերում լինում է գիշերը։ Այդ ժամանակ դուք ձեզ երևակայում էք ոչ թէ Աֆրիկայում, այլ Պարիզի կամ Լօնդօնի փողոցներում...

Մեր կառքերը ընթանում էին շքեղ, բայց դատարկ փողոցներով, մինչև հասանք հայոց եկեղեցու առաջնորդարանը, որ նոյնպէս մի փառաւոր շինութիւն է քաղաքի կենտրօնում և 100,000 բուբլուց աւելի արժէ, ունենալով ահագին պարտէզ, հարիւրաւոր արմաւենիներով։ Առաջնորդարանումն էլ իջևանեցինք։

Հ. Առաքելեան

ների խօսքերը վերագրված են նաև Հայրիկին։ Աղաւաղելու սովորութիւնը պատկանում է խաւարամիտներին և մենք չենք հասկանում թէ ինչ հիման վրա «Մուրճը» այդպիսի անհիմն կերպով վկայ է հանդիսանում այդ տեսակ աղաւաղումներին։

—

Պարսից կառավարութիւնը, որպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, այս օրերս հաստատեց ռուս ճանապարհային և ապրանքների տեղափոխութեան համար հիմնված ընկերութեան պայմանագիրը։ Այդ ընկերութիւնը կը գործի Էնզէլի-Թէհրանի և Թաւրիզ-Թեհրանի մէջ եղած տարածութեան վրա։ Ընկերութիւնը մտադրութիւն ունի վերոյիշեալ ճանապարհների վրա շինել ապրանքների մշտական պահեստներ, կընդունի ռուս և պարսկական ապրանքների տեղափոխութիւնը երկու ուղղութեամբ և այլն։ Ընկերութեան հիմնադիրներն են Մոսկվայի դրամատէրերը։

—

Բարեգործական ընկերութեան Երևանի ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Վարչութեանս 9 ապրիլի, № 46, ուղարկած հաշւի մէջ մոռացմամբ չէ յիշվել Վեհափառ Կաթողիկոսից ստացած 200 ռուբլու մասին։ Պարտք ենք համարում ուղղել այդ սխալը, աւելացնելով ընդհանուր գումարին և այդ 200 ռուբլին»։

—

Ինչպէս երևում է, կէրոսինագործների մէջ կայացած համաձայնութեան հարցը դեռ ևս իր վերջնական լուծումն չէ ստացել։ Այդ առիթով «С.-Пет. Вѣдомости» լրագրին գրում են հետեւեալը. «Կէրոսինագործների սինդիկատի վերջնական կազմակերպութեան գործը դեռ ևս չէ աւարտվում։ Սինդիկատի անդամները սկսում են կռուել միմեանց հետ ապագայ եկամուտները բաժանելու առիթով և անդադար վիճում են իրանց իրաւունքների մասին, թէ ինչ չափով պէտք է իրանք մասնակցեն արտասահման տանվող կերոսինի վաճառման գործին։ Երբ կերոսինագործները, երկար ջանքերից յետոյ, համաձայնութիւն կայացրին, այն ժամանակ այնպիսի առևտրականներ դանվեցին, որոնք թէպէտ և սեփական գործարաններ չունեն, բայց բաւական խոշոր դրամագլուխներ են ծախսել կէրոսինի վաճառահանութեան կազմակերպութեան վրա, և որոնք նոյնպէս իրանց պահանջներն արեցին։ Ներկայ դէպքում կէրոսինագործները յոյս ունեն մեծ եկամուտներ ստանալ մասամբ արտօնաւոր տարիֆների պատճառով, որ սահմանել է երկաթուղիական դէպարտամենտը յատուկ արտասահման ուղարկվող կերոսինի համար, և մասամբ ամէրիկական սինդիկատի հետ՝ շուկաները որոշելու վերաբերմամբ, համաձայնութեան և մրցումը վերացնելու պատճառով։ Թէ որքան այդ յոյսերը հնարաւոր են, երևում է նրանից, որ Պետերբուրգի բորսան Նոբէլ ընկերութեան պայերը շատ արագ բարձրացել է, համարեա 500 ռուբլով։»

—

Ապրիլի 23-ին, շաբաթ օր, Արքունական թատրոնում կայանալու է Կարա-Մուրզայի խմբի կոնցերտը։ Խումբը բաղկացած է երկու սեռի 80 անձինքներից։ Առաջին կոնցերտից յետոյ պ. Կարա-Մուրզա տալու է երկրորդ կոնցերտ, բարեգործական նպատակով։

—

Երկրագործութեան մինիստրութիւնը դիտաւորութիւն ունի կանանց համար գիւղատնտեսական դպրոց հիմնելու մի փորձ անել։

—

Հարաւային Ռուսաստանի անապատների բնագիտական և գիւղատնտեսական պայմանների ուսումնասիրութեան համար ծրագրվում է մի կայարան, որտեղ պէտք է սիստեմատիկաբար դիտողութիւններ կատարվեն և փորձեր անեն գիտական նպատակով։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը շրջաբերականներով առաջարկում է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին միջոցներ ձեռք առնել, որպէս զի ուսումնարաններում սրանից յետոյ չը թոյլատրվեն որ և է յօրելեանական տօնախմբութիւններ, առանց առանձին թոյլտուութեան։

—

Ներկայումս ներքին գործերի մինիստրութիւնը ստացել է համարեա բոլոր նահանգապետներից իր պահանջած տեղեկութիւնները արհեստաւոր դասակարգի վերաբերմամբ։ Առաջիկայ ամառը մինիստրութիւնը կը մշակի իր ստացած նիւթերը, իսկ աշնանը, արհեստաւոր դասակարգի կերպարանափոխութեան հարցը վճռելու համար մի յանձնաժողով կը կազմվի, որին կը մասնակցեն՝ ներքին գործերի, ֆինանսների, արդարադատութեան և պետական կալուածների մինիստրութիւնների ներկայացուցիչները։

—

Մայրաքաղաքի լրագիրները լսել են, որ Պարսկաստանի և Թիւրքիայի մէջ նոր առևտրական պայմանագիրներ կապելու համար եղած բանակցութիւնները աւարտվելու մօտ են։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Ցայտնի է, որ Մոսկվայում կայ «Գասպարեան Անկելանոց» անունով Բարձրագոյն հաստատված մի հիմնարկութիւն, որը մօտ 70 հազար բուբլի դրամագլուխ ունի։ Անկելանոցի խորհրդի անդամներն են ներկայումս այստեղի աչքի ընկնող փողաւորներից՝ պ.պ. Տ. Էքիզէր, Գ. Լիանոզեան, Մ. Սահարբէկեան և Ց. Ժամհարեան։ Հաւաստի աղբիւրներից իմանում ենք, որ յիշեալ խորհուրդը անկելանոցի դրամագլխից 4000 ռ. վերցնելով և իր կողմից էլ մի որոշ գումար աւելացնելով, վճռել է Զատկից յետոյ ձեռնամուխ լինել անկելանոցում նորոգումներ անելուն։ Զարմանում ենք, որ խորհուրդն այդպիսի մի կարևոր և հիմնական խնդիրը կանխապէս չէ ենթարկում ընդհանուր ժողովի քննութեան ու բարետեսութեան, և ժողովից առաջ չտապում է ինքնագլուխ լուծումն տալ խնդրին։ Ըստ սովորականին, ընդհանուր ժողովն այս տարի նոյնպէս վաղուց արդէն պէտք է կայացած լինէր, բայց թէ ինչու անկելանոցի խորհուրդն այդքան ուշացրեց և ուշացնում է— չը գիտենք։ Այսպէս թէ այնպէս, մեր կարծիքով, ժողովրդի ձայնն ու իրաւունքը յարգած լինելու համար, անկելանոցի խորհուրդը նորոգութեան և զանազան ծախսեր անելու փափուկ խնդիրը պէտք է անպատճառ թողնի կայանալիք ընդհանուր ժողովի որոշման, մանաւանդ որ շտապելու էլ ամենևին կարիք չը կայ»։

—

ԴԱՐԱՋԻՉԱԳԻՑ պ. Գ. Սինանեանց ուղարկել է մեզ տպագրելու հետեւեալը. «Մշակի» 35-րորդ համարում իմ «Նամակ Դարաչիչագից» թղթակցութեան մէջ ես գրել էի, որ Ելենովկա աւանում պ. Շարօվ հացի պահեստ է բացել և շատ էժան գներով հաց է ծախում չքաւորներին։ Այս քանի օրս ես անձամբ անցնելով այդ կողմերը և հետաքրքրվելով իմացայ, որ նրա ծախած ալիւրների մեծ մասը զանազան խառնուրդներ է պարունակում և վատ տեսակին պատկանում (չեն ուրանում, որ ունի նաև լաւ տեսակի ալիւր)։ Գնողներից և սպառողներից շատերը պատմեցին, որ նրա 1 ռ. 10 կ.—1 ռ. 20 կ. պուդը ծախած ալիւրը ոչինչ «աւելորդ» բաժին ունեցող յատկութիւն չունի և որ մի պուդից ստացվում է 30—35 ֆունտ հաց միայն, այն ինչ մի քիչ լաւ այդքան ալիւրից սովորաբար դուրս է գալիս 45—50 ֆ. հաց։ Ուրեմն իւրաքանչիւր պուդին տարբերութիւն ունի 15 ֆ. հաց, որը այժմեան գնով բռնում է 60 կոպ. փող։ Եթէ մի պուդից վնաս է ստացվում ամբողջ 60 կոպ. ապա որքան կարող են տուժել այն հարիւրաւոր ընտանիքները, որոնք հազարաւոր պուդերով հաց են գնում իրանց չքաւոր տեղովը... Որ պ. Շարօվի ծախած ալիւրի մի մասը գարիի խառնուրդ է պարունակում,—այդ հաստատում են թէ աղքատներին օգնող մասնախումբը, թէ դաւառապետ պ. Ֆօրստէն, որ հարիւրաւոր պուդերով գնելով և բաժանելով Դարաչիչագի կարօտեալներին՝ վերջը փոշմանել, զղջացել էին, վատ հացի համբաւը լսելով և թէ այն ընտանիքները, որոնք իրանք թխելուց յետոյ բողոքեցին իրան՝ ծախողին, որ վերջինիս ծախած ցորենի ալիւրը՝ գարիի խառնուրդի հաց է արտադրել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԾ ԱՂԷՏ

—

Մենք արդէն հաղորդեցինք, որ սոսկալի հեղեղը աննկարագրելի վնասներ է պատճառել Վանի նահանգին։ Ահա մի քանի մանրամասութիւններ այդ մասին։ «Վանի կուսակալութիւնէն եկած հեռագիրները շատ կսկծելի նկարագրութիւն մը կընեն այն ահագին աւերումներուն վրա, զոր մինչև ցարդ նմանը չը տեսնուած անձրևներ այս վերջերս տեղալով գործած են Վանի և շրջակայ գիւղերու ու աւաններու մէջ։ Միայն Վանի մէջ այս հեղեղներէն բոլորովին փլած և քանդուած են 150 տուն, 10 խանութ, 5 կամուրջ, 1 սրճարան և 650 կանգուն պարսպէզի պատ։ Ասոնք ազքատիկներու բնակութիւններն էին, որոնք այսպէս արկածի մը դիմանալու կարող չէին, բայց աւելի հաստատուներն ալ անվնաս չը մնացին, որովհետև ասոնցմէ ալ 450 հատ խլված վիճակի հասել են։ Շրջականներն ալ ունեցան իրենց աւերածները։ Արտ մը որ 200 Պօլսոյ քիլէ ցորեն ցանուելիք տարածութիւն մը ունէր, կէսէն աւելի աւազով ծածկուեր է։

«Արճէշի մէջ, այս անձրևները քշած տարած են 51 տուն, 70 աւելի ուրիշ բնակութիւններ վնասված են։ Կառավարութիւնն, ասոնցմէ զատ, հարկ տեսեր է 30 տուն քանդել տալ, որովհետև պատերնին ճարճատած ըլլալով, վախ կար թէ յանկարծ փլելով դուցէ աղէտներ պատճառեն։

«Ատըլճըվազի մէջ շատ աւելի աւերումներ տեղի ունեցեր են։ Հոն, քանդուած կայ մինչև 600 տուն և ախոռ։ Ջրերուն մէջ երկու հոգի խեղդուեր են, և 80 ոչխար, 69 կով, 20 գոմէշ և ուրիշ շատ մը ինչքեր ալ անյայտ են. կամ աւերակներուն տակ մնացին կամ ջուրը առաւ տարաւ զանոնք։ Կաւարի մէջ ալ շատ մը տուներ փլեր են և մեծ քանակութեամբ տաւար խեղդուեր է։

«Կաւարի մէջ հեռագրատունն հիմնայատակ փլեր և ուրիշ շինքեր ընասուեր են։

«Անհագին թշուառութիւն մը սկսած է տիրել այդ կողմերու բոլոր բնակիչներուն համար»։

ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ ԼԷՅՊՅԻԳՈՒՄ

—

Այս տարի Գերմանիայում առաջին գիտնական կենդրէսներից մէկն էր պատմաբանների համագումար ժողովը, որ տեղի ունեցաւ մարտի 17-ին և 18-ին Լէյպցիգում, պրոֆէսօր Լամպրէխտի նախագահութեամբ։ Ժողովում կային 300-ից աւելի մասնակցողներ, առաւելապէս համալսարանների պրոֆէսօրներ և գիմնազիաների ուսուցիչներ։ Ցայտնի գիտնականներից ժողովին ներկայ էին՝ Վակմուտ, Բրոկհաուզ, Հէյդէլ, Եգէր, Շմոլլէր պրոֆէսօրները և շատ ուրիշները։ Սաքսոնիայի կառավարութեան ներկայացուցիչը, որը ողջունեց Լէյպցիգում գումարված գիտնականներին, մինիստր Լէյդէվիցն էր։

Ժողովի քննութեան և վիճաբանութեան առաջին խնդիրն էր՝ հին պատմութեան դասաւանդութիւնը գիմնազիաներում։ Այդ խնդիրը կապ ունի կլասիցիզմի և ռէալիզմի մէջ եղած կռուի հետ։ Որպէս յայտնի է, գիտնականները այդ հարցի առիթով երկու միմեանց հակառակ ուղղութեան են հետևում։ Մի քանիսները աշխատում են պահպանել «հումանիստական» դաստիարակութեան դոյութիւն ունեցող ձևը, իսկ միւսները ձգտում են կեանքի պահանջներին յարմարեցնել դպրոցը։ Գիմնազիաներում հին լեզուների գերադասութեան հակառակորդները հին պատմութեան մանրամասն դասաւանդութեան դէմ էլ են, առարկելով, թէ հին պատմութեան դասաւանդութիւնը ի վնաս նոր պատմութեան է լինում։ Վիլհելմ II կայսրը արժանայիշատակ դպրոցական յանձնաժողովում ասեց, եթէ ընթերցողները յիշում են, որ պատմութեան դասաւանդութեան մէջ պէտք էր «յետ, գնալ, Սէդանից դէպի Ֆրիդրիխ Մեծի դարաշրջանը, միջին դարերից դէպի հնագոյն պատմութիւնը»։ Այդ խօսքերը, որպէս անդադրարձումն բաւական տարածված կարծիքի, խօսակցութիւնների առիթ տուին թէ մանկավարժների և թէ հասարակութեան մէջ։ Գերմանական պատմաբանները մեծ մասամբ այդ կարծիքի դէմ են։ Պրոֆէսօր Օսկար Եգէր, Կեօլնի գիմնազիայի դիրեկտորը, որը այդ առարկայի մասին մի զեկուցում կարդաց, ապարդիւն է համարում հնագոյն պատմութեան դասընթացը կրճատելու համար արած բոլոր փորձերը։ Եգէր, յիրաւի, այլ կերպ դատել էլ չէ կարող, որովհետև, որպէս համոզված կլասիկ, հին լեզուների դասաւանդութեան կրճատման փորձերն անգամ վնասակար է համարում, որոնք արդեալ կը դառնան երիտասարդութեան մէջ զարգացնելու «պատմական իմաստը, առանց որի անհնարին է հասկանալ սեփական պատմութիւնը»։ Միայն հին պատմութեան մէջ, հաւատացնում է զեկուցողը, ընդունակ երեխան ոչ միայն յիշողութեան մէջ է պահում փաստերը, բայց և ընտելանում է ինքնուրոյն կերպով մտածել, դատել, և իսկապէս այդ է դաստիարակութեան նպատակը։ Բայց ինչու միայն հին պատմութեան մէջ։ Որովհետև այստեղ աշակերտների առջև դրված է ոչ միայն դիդակտիական դասագիրք, բայց և պատմութեան աղբիւրներ։ Եթէ հին պատմութեան դասաւանդութիւնը կանոնաւոր կերպով է դրված, նա զուգահեռաբար է ընթանում հին լեզուների դասերի հետ. աշակերտը, որ առաջ կարդում է Ցեզարը և Կսէնօֆոնտը, և ապա Ցացիտը, Դեմոսթենէսը և Սոֆոկլը, ստիճանաբար մտնում է հին աշխարհի շահերի և մտքերի շրջանը։

Եգէրից ոչ պակաս համոզված է հին պատմութեան ուսումնասիրութեան անհրաժեշտութեան մէջ և Վիէննայի պրոֆէսօր Գաննակ։ Հաղարաւոր թելեր կապում են մեր դարաշրջանը հնի հետ։ Հին աշխարհի ուսումնասիրութիւնը նախապատրաստում է օբիէկտիվ կերպով վերաբերվելու քաղաքական, սոցիալական և տնտեսական այն կռուին, որ մեր ժամանակի մարդուն սպասում է կեանքի մէջ։ Միայն հին պատմութեան մէջ՝ ազատող սերունդը կարող է իւրացնել իսկական հայրենասիրութիւն և սովորել անձնական շահերը զոհել հասարակական շահերի համար։ Մեր ժամանակը պահանջում է, որ անձնաւորութիւնը ենթարկվի պետութեան։ Պրոֆէսօր Գաննակ միայն կը ցանկանար, որ հին պատմութեան մէջ անտես չառնվի և Արևելքի պատմութիւնը և որպէս զի Ցունաստանի պատմութեան մէջ մեծ ուշադրութիւն դարձվի, քան այժմ, յունական գեղարուեստի արտադրութիւնների վրա։

Համագումար ժողովի անդամների մեծամասնութիւնը ոչ միայն պատմաբաններ են, բայց և ամենից առաջ լեզուագէտներ։ Հասկանալի է, որ նրանք չէին կարող համակրել մի բէֆորմի, որ առաջարկում էին բնագիտութեան և գործնական կեանքի ներկայացուցիչները։ Այնու ամենայնիւ, զեկուցանողների դէմ խօսողներ եղան։ Մասնացոյց էին անում այն բանի վրա, որ մեր ժամանակվայ պահանջները ոչն չեն, ինչ որ էին Ցունաստանում և Հռոմում։ Արժէ նոյնպէս յիշատակել, որ հռետորներից մէկը հրաւէր կարդաց՝ չօվինիզմը չը զարգացնել մանուկների մէջ, որը մեծ համակրութեամբ ընդունվեց։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, ապրիլի 12-ին

Զատկի շաբաթն ենք, առայժմ ուշագրաւ ոչինչ կայ։ Պատրիարքը կը մնայ միշտ հրաժարեալ։ Արդարադատութեան նախարարը թէև հրաւիրեց զինքը իր քով և խնդրեց որ հրաժարականը ետ առնէ, բայց Աշըգեան պատրիարք յայտնեց, որ «շատ կը վախնայ ժողովրդէն». սկսած է լալ և ըսած է, թէ «թող քիչ մըն ալ ուրիշը պատրիարքութիւն ընէ, գուցէ ժողովուրդը հանդարտի»։

Կը կարծուի, որ Զատկի տօնին առթիւ մաս մը բանտարկեալներու ազատութիւն տրուի սուլթանէն և պատրիարքն ալ հրաւիրուի ալ ապահոված նկատել ինքզինքը, և դառնալ աթոռը։ Պարզ ենթադրութիւն է։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բրոդրիկ, Կորդոն և լորդ Վօլմեր պատգամաւորները համայնքների ժողովում մի բիլլ մտցրին, որով առաջարկում են վերացնել այն կանոնը, որի հիման պէրի աստիճան ստացող անձը կորցնում է համայնքների ժողովի անդամ լինելու իրաւունքը։ Նոր բիլլը պահանջում է վերոյիշեալ կանոնի փոփոխութիւնը այն մտքով, որպէս զի տիտղոս ստացող անձինք իրաւունք ունենան ընտրել կամ համայնքների ժողովը, կամ լորդերի ժողովը և որպէս զի ընտրելով այդ ժողովներից մէկը, նրանք զրկվէին միւսին մասնակցելու իրաւունքից։

—Կ. Պոլսից գրում են. «Եէմէնէն կիմացուն են, որ Ասիրի լեռնային նահանգի ցեղերը ապստամբեր են։ Ապստամբներին զէնքեր ղրկուած են Սաւաքինի ճանապարհով»։

—Լիսաբոնից հեռագրում են Հիւսիսային գործակալութեանը, ապրիլի 13-ին, հետեւեալը. «Ե-

ըէկ խալերայով հիւանդանալու 93 դէպք կար, բայց մահվան դէպքեր չը կային։

—Լոնդոնից հեռագրում են, որ Համայնքների ժողովը 281 ձայների առաւելութեամբ 194-ի դէմ ընդունեց մի օրինագիծ, որով սահմանվում է օրական 8 ժամվայ աշխատանք բանւորների համար։

—Պարիզից հեռագրում են, որ կալանաւորված է Ֆինսօն անունով մէկը, զինուորական մինիստրութեան պաշտօնեայ, որը յայտնի է երիտասարդ գրողների չրջանում։ Նրա բնակարանում և բիւրօում կատարված խուզարկութիւնների ժամանակ գտնված են ընդարձակ գրագրութիւն անարխիստների հետ և պայթող նիւթեր։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԼՈՆԴՈՆ, 15 ապրիլի։ Ակվիտ առաջարկեց այսօր համայնքների ժողովին ձեռք զարկել բիլլի առաջին ընթերցանութեանը՝ Վալիսում եկեղեցին պետութիւնից բաժանելու մասին։

ՊԱՐԻԶ, 16 ապրիլի։ Քրէական դատարան Անրիի գործի առիթով. դատարանի չինութեան ներսից և դրսից զգուշութեան ընդարձակ միջոցներ են ձեռք առնված։ Գործի ունկնդրութիւնն սկսվեց կէսօրին, հասարակութեան մեծ բազմութեան ներկայութեամբ։ Մեղադրական ակտերի ընթերցանութեան ժամանակ Անրի աչխատում է անտարբեր լինել։ Նախագահը հարցաքննում է մեղադրվածին «Տէրմինուս» կաֆէում եղած պայթիւնի մասին։ Անրի ամեն բան խոստովանում և ասում է, որ կամենում էր, հնարաւորութեան չափ, աւելի բուրժուաներ սպանել։ Անրի պնդում է, որ միայնակ ինքն է «Bon enfant» փողոցում եղած պայթիւնի առաջացնողը, դրանով նա կամենում է ապացուցանել կօրմոի ածխագործներին՝ անարխիստների դէպի նրանց ունեցած անձնուիրութիւնը։ Անրի կատարելապէս հրաժարվեց բացատրութիւններ տալ իր կեանքի մասին և ասում է, որ իրան չատ լաւ յայտնի է, որ իրան մահվան պատիժ է սպասում։

ԼՈՆԴՈՆ, 16 ապրիլի։ Պոլտի և Ֆարնարա անարխիստները երդուեալների դատարանի դատի են ենթարկված։—Համայնքների ժողովը ընդունեց մեծ մշտական մասնաժողով հիմնելու առաջարկութիւնը՝ չօտլանդական գործերը կանխապէս քննելու համար։

ԱԹԷՆՔ, 16 ապրիլի։ Նոր երկրաչարժ սկսվեց 9 ժամ 20 րոպէին, չարունակվեց 15 վայրկեան և զգալի էր համարեա ամբողջ Յունաստանում. երկրաչարժը լրացրեց Ֆիվի կործանումն և համարեա վերջնականապէս կործանեց Ատալանտի։ Երկրաչարժից վնասվեցին՝ Լամիա, Լարիսա, Վոլո, Խալկիդա, Սիրա, Պատրաս և Զանտէ։ Աթէնքում ներկայումս մաղթանք է կատարվում մայր եկեղեցում ժողովրդի ահագին բազմութեան ներկայութեամբ։ Մինիստր նախագահը հանդատացրեց ժողովրդին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 ապրիլի։ Արդարադատութեան մինիստրութեան կառավարիչ Մուրավիէվ արդարադատութեան մինիստր է նշանակված։

ՊԱՐԻԶ, 16 ապրիլի։ «Terminus» հիւրանոցում պայթիւն առաջացնող Անրի մահվան պատժի է դատապարտված։

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ, 18 ապրիլի։ Երէկ բացվեց Կայսր Ալէքսանդր II-ի արձանը՝ ներկայութեամբ գեներալ-նահանգապետի, զէմստվոյի պաշտօնեաների, Ֆինլանդիայի քաղաքների և համայնքների ներկայացուցիչների, քաղաքացիական և զինուորական իշխանութիւնների. հաղարաւոր ժողովուրդ էր հաւաքվել։ Հանդէսը բանալով, գեներալ-նահանգապետը կարդաց բարձրագոյն մանիֆէստ։ Մեծահոգի Միապետի դէմքի գծերը գեղեցիկ կերպով են արտայայտված. կողքերի գրուպպաները ներկայացնում են անցեալ թագաւորութեան մեծ անցքերը։

ԲԵԼԳՐԱԴ, 18 ապրիլի։ Թագաւորի հրամանագրով վերացված է Միլանին հեռացնելու վերաբերեալ օրէնքը և սկսպչչինայի վճիռը՝ Նատալիա թագուհու վերաբերմամբ։ Միլանին վերադարձված են հպատակութիւնը և թագաւորական տան անդամի իրաւունքները։

ՊԱՐԻԶ, 19 ապրիլի։ Պատգամաւորների ժողովում հարցասխնդում է արված դրամատէրերից և հոգևորականներից անարխիստների ստացած սուբսիդիաների մասին։ Արդարադատութեան մինիստրը յայտարարում է, որ ինքն, առանց տատանվելու, կը հաղթի յանցաւորներին, ինչ կուսակցութեան էլ պատկանին նրանք։ Աջակողմեան անդամ Դիւգ ասում է, որ Բոուչիլդ փող էր տալի մի քանի անարխիստներին։ Հռետորը պահանջում է, որ միջոցներ ձեռք առնվեն այն դրամատէրերի դէմ, որոնք սուբսիդիաներ են տալիս անարխիստներին։ Պէրիէ առաջարկում է անցնել հերթական հարցերին, որը և քուէարկում է պատգամաւորների ժողովը։

ԲԵՐԼԻՆ, 20 ապրիլի։ Սոցիալիստների՝ մայիսի 1-ի տօնախմբութիւնը առ այժմ առանց որ և է անկարգութիւնների անցաւ։ Ամեն տեղ բանում էին։ Անարխիական մի ժողով փակվեց՝ գրգռող ճառերի համար։ Գերմանիայի ամեն կողմերից ստացած տեղեկութիւնները կատարելապէս հանգստացնող են։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Դ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) ղ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ԹԻՖԼԻՍԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՕՆ

Հինգշաբթի, ապրիլի 21-ին

Հայ թատրոնասէրները կը ներկայացնեն

Յօգուտ Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան

„ՔԱՆԴԱԾ ՕԶԱԽ“

Կօմ. 3 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի։

Մասնակցողներ, տ.տ. Եւանգուլեան, Խոսրովեան, Իշխանուհի օր. Արղութեան, տ.տ. Թայիրեան, Ալիխանեան, օր. Փոնդոյեան։ Պ.պ. Մանդինեան, Խալաթեան, Տիգրանեան, Բաշինջաղեան և Մամիկոնեան։

Տոմսակները կարելի է ստանալ Ծատուրեանի խանութում։ 1—1

ԵՐԴՈՒՆԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ

ՊՕՂՈՍ ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆ

Հասցէն՝ Ծարո-Ինստիտուտսկայա փողոց, № 8։

(№ 42) 3—3

ԲԺԻՇԿ ՎԱՀԷ ՄԻՆԱՍԵԱՆ

ՎԻԵՆՆԱ ՀԱՍՏԱՏՎԱԾ

Պատրաստ է օգնել ամեն հիւանդներին, որ կը գան քաղաքս դարմանվելու համար։ Հասցէս՝ Wahe Minassian. D-r. med. VIII Schlosse gasse, 10, Vienna. (№ 42) 2—5

Լոյս տեսաւ

ՐԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ

ԸՆՏԻՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խմբագրութեամբ Գր. Խալաթեանի

Երկու հատոր. հեղինակի երկու պատկերներով, ինքնագրով, կենսագրական նկարագրով, Նոր-Նախիջևանի համառօտ բառգրքով։

Հրատարակեց ՎԱՌՎԱՌԷ ՔԱՆԱՆԵԱՆ յօգուտ հեղինակի ընտանիքին։

Գինը երկու հատորի—4 ռուբլի։ Դիմել՝ ՄՕՍԿՎԱ, Լազարեան ճեմարան. ԹԻՖԼԻՍ, Փիլիպպոս Վարդանեանց.

(№ 31) 4—6

Շուտով լոյս կը տեսնի

Պ. ՄԱՆՏԵԳԱՅԻ

„ՀԻՒԱՆԴ ՍԷՐ“

առողջապահական վէպը

Դիմել՝ Александрополь. учит. Ерванду Налбандянъ (ե. չ.) (№ 39) 2—4

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, ապրիլի 23-ին, կը լինի

ՀԱՄԵՐԳ

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ

Բարեհաճ մասնակցութեամբ պ.պ. Դաւթեանի, Բարխուդարեանի, Զամբաբեանի, Ցակովբեանի, Ն. Մ. և Թիֆլիսի հայկական նորակազմ խմբի, որը բաղկացած է 80 երկսեռ անձնաւորութիւններից

Կանանց խումբը Ախալցխայի շորերով։

Սկիզբն է 8½ ժամին երեկոյեան։ Տեղերի գինը սովորականն է։

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամների, որ Ս. Նշան եկեղեցում ապրիլի 23-ին, առաւօտեան 11 ժամին, ս. պատարագից յետոյ, լինելու է ի յիշատակ հանգուցեալ բարերարաց հոգեհանգիստ և ապա կը կայանայ ընկերութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ նոյն եկեղեցու ուսումնարանի դահլիճում։

Ընդհանուր ժողովի պարապմունքներն են.

1) 1893 թ. եկ և մտից հաշուի քննութիւնը և հաստատութիւնը։
2) 1894 թ. նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը։
3) Վարչութեան մի քանի առաջարկութիւնների քննութիւնը։
4) Վարչութեան չորս անդամների և փոխ անդամների ընտրութիւնը։

Վարչութեան անդամներից դուրս են գնում հերթով՝ տ.տ. Նադէժդա Ալիխանեանց, Վառվարէ Ռօտինեանց, Սրբուհի Երիցեանց, Հեղինէ Աւթանդիլեանց։

Ժողովին կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք։

Ընկերութեան 1893 թ. եկ և մտից հաշիւը ցանկացողները կարող են ստանալ կարս ու ձևի դպրոցում, Սերգիեվսկայա փողոց, № 14։

(№ 43) 2—2

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(Առանց սակարկութեան)

Եղբ. Գուլասպօվների մագազինում և պահեստում, Դվօրցօվայա փողոցի վրա, կալուածական Բանկի տան մէջ և Սարաջևի ու Ծովիանովի տան մէջ, „բակում“։

Զանազան ապրանքներ։ Կանանց և երեխաների կաստօրի և յարդէ գլխարկներ 30 կօպէկից մինչև 1 ր., տղամարդկանց կաստօրի գլխարկներ 1 ր. 25 կօպէկից սկսած և աւելի թանգ, վուալներ 20 կօպէկով, կրուժեվաներ, ժապաւէններ, ծաղիկներ, զգեստների և գլխարկների համար զուգեր՝ արշինը 20 կօպէկով և աւելի թանգ, անձրևականներ, հովանոցներ և ձեռնոցներ 20 կօպէկից, ժերսէ 1 ռուբլուց սկսած և աւելի թանգ։ Եւ նոյնպէս մեծ ընտրութիւն մոդային և գալանտերէյնի ուրիշ ապրանքների էժան գներով, որի մէջ պատեղի հասարակութիւնը կը համոզվի՝ այցելելով մեր վաճառումն։

(№ 12) Ցարդանքով ԵՂԲ. ԳՈՒԼԱՍՊՕՎՆԵՐ 30—30

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԷ-ԼԱ-ՖԱՐ ԵՒ ԸՆԿ.

կատարում է հետևեալ օպերացիաները.

1) Տոկոսաբեր թղթերի ապահովութեամբ՝ փոխատուութիւն.
2) I, II, III խաղարկութեան տոմսակների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ՐՈՒԲԼԻ ՎՃԱՐՈՒՄՈՎ.
3) Փոխանակագրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.
4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.
5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.
6) Ընդունում է in casso վէկսելներ և ուրիշ դոկումէնտներ։

Լիազօր՝ Ս. Պ. ՊԱՎԼՕՎ ԹԻՖԼԻՍ, Սերգիեվսկայա փողոց, № 1.

Գանձակում գործակալն է՝ Նիկոլայ Կարամանովիչ Օհանէսով։

(№ 15) (Հ.) 11—50

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նագօրնայա փողոց, № 9)

Ցանկացողք, ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.

№ 88 16—20

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։

(№ 145) 142—150

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Апрѣля 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.